ՖՐԱՆՍԱՀԱՅԵՐԻ ՄԻԱՑՅԱԼ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՃԱԿԱՏԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ (1936—1938 ԹԹ.)

ՏԻԳՐԱՆ ԴՐԱՄԲՅԱՆ

Ֆրանսիայի հայկական գաղթօջախի առաջադեմ մասի մասնակցությունն այդ երկրի հասարակական-քաղաքական կյանքին 1936—1938 թթ. ընթանում էր ներքին և միջազգային բարդ իրադրության մեջ։ Հիտլերյան Գերմանիայի, ֆաշիստական Իտալիայի և միլիտարիստական Ճապոնիայի ագրեսիվ տենդենցների ակտիվացումը, ինչպես նաև նրանց միջև 1936 թ. այսպես կոչված «հակակոմինտերնական դաշնագրի» կնքումն ամբողջ ակնառությամբ վկայում էին համաշխարհային պատերազմի մոտեցող սպառնալիքը։ Ստեղծված իրադրության մեջ կարևոր նշանակություն էր ստանում Ֆրանսիայի հայկական գաղթօջախների աշխատավոր մասսաների մղած պայքարը ֆաշիզմի և նրա գործակալների դեմ՝ հանուն հայկական գաղթօջախի հայրենասիրական, առաջադիմական բոլոր ուժերի համախմբման, ֆրանսիական պրոլետարիատի օրինակով ժողովրդական ճակատի ստեղծման։

Աշխատավոր հայերն ուժերի ներածին չափով իրենց ավանդը ներդրեցին նաև ֆրանսիական բանվոր դասակարգի համաժողովրդական պայքարի գործում։ Ղեկավարվելով իրենց ավանգարդի՝ Ֆրանսիայի կոմունիստական կուսակցության հայկական սեկցիայի՝ Ֆրանսիայում իննսուն հազարանոց հայկական գաղթօջախի միակ կազմակերպված քաղաքական ուժի կողմից, նրանք այդ տարիներին ցուցադրեցին ֆրանսիական աշխատավորների հետ դասակարգային համերաշխության վառ օրինակներ և իրենց հավատարմությունը պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքներին։

Դրա ակնառու վկայությունն են 1930-ական թվականներին Ֆրանսիայի գործադուլային շարժմանը հայ աշխատավորների մասնակցության բազմաթիվ փաստերը և, մասնավորապես, մասնակցությունը Մարսել քաղաքի դոկերների 1935 թ. դեկտեմբերի խոշոր գործադուլին։ Մարսելի դոկերների դեկտեմբերյան ընդհանուր գործադուլին մասնակցեցին Մարսելի նավահանգստի բոլոր 7000 դոկերները, որոնցից ավելի քան հազարը հայ դոկերներն էին՝ կոմունիստ Ս. Արապչյանի գլխավորությամբ[1]։

Ֆրանսիական կոմկուսի հայկական սեկցիայի օրգան «Զանգու» թերթը «Ողջույն Մարսելի դոկերների հաղթանակին» առաջնորդող հոդվածում նշում էր, որ Մարսելի դոկերների գործադուլի հաջող ավարտման պատճառներից մեկը հայ դոկերների դասակարգային ինքնագիտակցության անտարակուսելի աճն էր և, մասնավորապես, նրանց մասսայաբար ընդունվելը դոկերների արհմիության շարքերը։ Հենց արհմիությունն էր, որ դոկերների շրջանում դաստիարակչական և բացատրական վիթխարի աշխատանք տարավ, իր անդամների մեջ արմատավորելով իրենց աշխատանքային ընկերների հետ դասակարգային համերաշխության գիտակցությունն[2]։

---

1 «Զանգու», 14. II. 1936։

2 Նույն տեղում, 20. XII. 1935։

Հայ և ֆրանսիացի աշխատավորների դասակարգային համերաշխության դրսևորման փաստերը վկայող օրինակներ եղան նաև 1936 թ. ամռանը Մարսելի և Լիոնի շաքարի և տեքստիլ արդյունաբերության բանվորների ընդհանուր գործադուլի ժամանակ։ «Ջանգու» թերթի «Ֆրանսահայ աշխատավորներն ամեն տեղ իրենց ֆրանսացի եղբայրներու կողքին գործադուլի մեջ» խմբագրական հոդվածում նշվում էր, որ Մարսելում և «Սեն Շարլ» շաքարի ֆաբրիկայում առանց բացառության բոլոր հայ բանվորները ֆրանսիացի բանվորների հետ համատեղ մասնակցում են գործադուլին։ Այդ ֆաբրիկայի ֆրանսիացի և հայ բանվորների ներկայացուցիչներից ստեղծվել էր գործադուլավորներին օգնող կոմիտե, որը հավաքել էր 2000 ֆրանկ և, բացի այդ, 50 ֆրանկով գնել էր պարենային ապրանքներ. ընդ որում, տեղի հայ առևտրականները, իրենց համակրանքը արտահայտելով գործադուլավորների նկատմամբ, մթերքը նրանց տալիս էին ապառիկ[3]։

Մարսելի «Սեն Շարլ» ֆաբրիկայի գործադուլի հետ գրեթե միաժամանակ բռնկվեց Լիոնի «Դարիո-Ջետա» տրիկոտաժի ֆաբրիկայի տեքստիլագործների գործադուլը։ Ֆաբրիկայի աշխատողների մեծամասնությունը կազմող հայ ջուլհակուհիներն ամբողջությամբ միացան իրենց ֆրանսիացի գործընկերուհիներին և ակտիվորեն ներգրավվեցին գործադուլի մեջ, որն ավարտվեց բանվորների, ջուլհակուհիների և սպասարկող անձնակազմի հաղթանակով[4]։

Հայ աշխատավորներն ակտիվորեն մասնակցեցին նաև Վիլլորպաննե քաղաքի «Ժիլե» մետաքսագործական ֆաբրիկայում, Տեսին քաղաքի տեքստիլ ֆաբրիկայում և Ֆրանսիայի մի շարք այլ քաղաքներում տեղի ունեցած գործադուլներին։ Լիոնում և Գրենոբլում բանվորների ընդհանուր գործադուլին մասնակցեցին նաև հայ աշխատավորները՝ կոշկակարները, վարսավիրներն ու դերձակները։ Նրանց ղեկավարները, ինչպես և նախորդ գործադուլների ժամանակ, կոմունիստներն էին՝ Ս. Բաղդասարյանը (Սաքո) և Վ. Շահմենենջյանը (Ռամիս)[5]։

Գործադուլային շարժմանը Ֆրանսիայի հայ աշխատավոր բնակչության մասնակցության փաստեր բերվեցին նաև Ֆրանսիայի կոմունիստական կուսակցության 1936 թ. հունվարին Լիոնում տեղի ունեցած VIII համագումարում։ Հայ կոմունիստ պատգամավորները համագումարի մասնակիցներին ծանոթացրեցին Ֆրանսիայի բանվոր դասակարգի համազգային պայքարին հայ աշխատավորների ակտիվ մասնակցության փաստերին, բերեցին այնպիսի օրինակներ, որոնք վկայում էին ֆրանսիացի և հայ աշխատավորների դասակարգային միասնությունը ռեակցիայի մեքենայությունների և կապիտալի հարձակման դեմ մղած պայքարում։

Այդ կապակցությամբ հետաքրքիր է նշել, որ Ֆրանսիայի կոմկուսի VIII համագումարում ներկայացված էին Ֆրանսիայի կոմկուսի մեջ մտնող բոլոր կոմունիստական սեկցիաների, այն է՝ իտալական, լեհական, գերմանական, իսպանական, հունգարական, ռումինական, չեխոսլովակյան, արևմտահայկական, հարավսլավական, բուլղարական, արևմտաուկրաինական, հունական, ալբանական, պորտուգալական և լատինաամերիկյան սեկցիաների պատգա-

3 Նույն տեղում, 19. VII. 1936։
4 Նույն տեղում, 10. VII. 1936։
5 Նույն տեղում։

մավորները։ Ֆրանսիայի կոմկուսում կոմունիստական սեկցիաների նման մեծաքանակությունը բացատրվում էր այն հանգամանքով, որ, վերոհիշյալ երկրներում կոմունիստական կուսակցությունների գործունեությունն արգելելու կապակցությամբ, Կոմինտերնն անհրաժեշտ էր համարել Ֆրանսիայում ներդաղթի ներկայացուցիչներից ստեղծել կոմունիստական սեկցիաներ, որոնք իրավունք ունեին ներկայացնելու այդ երկրների կոմկուսները՝ Ֆրանսիայի կոմկուսի շրջանակներում[6]։

Ֆրանսիական պրոլետարիատի դասակարգային մարտերը և Ֆրանսիայում գործադուլային շարժման թափն առանձնապես մեծ մասշտաբների հասան 1936—1938 թթ., երբ ֆրանսիական բուրժուազիայի ռեակցիոն շրջաններն իրենց տիրապետությունն ամրապնդելու նպատակով ակտիվացրեցին Ֆրանսիայում ֆաշիստական դիկտատուրա հաստատելու փորձերը։ Ֆրանսիական ռեակցիան դեռևս 1934 թ., հենվելով երկրի պրոֆաշիստական տարրերի վրա, փորձեց ֆաշիստական խռովություն կատարել և տապալել հանրապետական կարգը, սակայն շնորհիվ Ֆրանսիայի բանվոր դասակարգի ջանքերի, որը վճռականորեն հանդես էր գալիս հանրապետության պաշտպանությամբ և հակահարված տալիս ռեակցիայի ուժերին, վերջինիս մեքենայություններն ի չիք դարձան։ Ռեակցիայի ուժերին տրված այդ հակահարվածի կազմակերպիչը Ֆրանսիայի կոմունիստական կուսակցությունն էր։

Բուրժուական Ֆրանսիայի կառավարող շրջանների ռեակցիոն քաղաքականությունը սաստկանում էր նաև երկրի համար ոչ պակաս սխալ արտաքին քաղաքականությամբ։ Աչք փակելով Եվրոպայում ֆաշիզմի շարունակ աճող վտանգի առաջ, իսկ հաճախ էլ բացահայտորեն թողտվություն անելով ֆաշիստական ագրեսորներին, Ֆրանսիայի ռեակցիոն կառավարողները, որոնք, ինչպես այն ժամանակ դիպուկ կերպով նկատել է Ֆրանսիայի կոմկուսի Կենտկոմի քարտուղար Մ. Թորեզը, ավելի շատ վախենում էին սեփական ժողովրդից, քան հիտլերյան ավազակներից, հակասովետական կատաղի կամպանիա ծավալեցին և մի շարք գրոհներ ձեռնարկեցին Ֆրանսիայի բանվոր դասակարգի և նրա ավանգարդի՝ կոմկուսի դեմ։

Ստեղծված բարդ իրադրության մեջ Ֆրանսիայի հայկական գաղթօջախի առաջադեմ ուժերը ստիպված էին պայքարել երկու ճակատով՝ մի կողմից ֆրանսիական ռեակցիայի մեքենայությունների դեմ, որը հակասովետական սանձարձակ կամպանիա էր ծավալել և հարձակում էր սկսել աշխատավորների իրավունքների դեմ, իսկ մյուս կողմից՝ Ֆրանսիայում դաշնակցական պարագլուխների դեմ։ Պետք է նշել, որ այն տարիներին Ֆրանսիայի հայ առաջադիմական մամուլի խմբագրական հոդվածների գլխավոր թեման և հիմնական բովանդակությունը կազմում էր ֆաշիզմի դեմ մղվող հետևողական ու վճռական պայքարն՝ ի պաշտպանություն Սովետական Միության և Սովետական Հայաստանի։ Այսպես, օրինակ, «Զանգու» թերթն իր «Ֆաշիզմը պատերազմ է» առաջնորդող հոդվածում, ընդգծելով ֆաշիզմի սպառնալիքի դեմ և ի պաշտպանություն ՍՍՀՄ-ի մղվող պայքարի համար Ֆրանսիայի հայկական գաղթօջախի հայրենասիրական և առաջադիմական բոլոր ուժերը մոբիլիզացնելու անհրաժեշտությունը, գրում էր. «Պայքարել Խորհրդային

[6] VIII Congres National du Parti Communiste Francais. Lion—Villeurbanne, 22—25 Janvier 1936. Conte-rendu stenografique,Declaration des delequês, immigrês, Paris, 1936, էջ 534.

Հայաստանի և Խորհրդային Միության պաշտպանության համար, կնշանակե պայքարել ուժեղ կերպով խաղաղության բոլոր թշնամիներուն դեմ, և առաջին առթիվ Հիտլերի հայ ակենդներուն, դաշնակ շեփերուն դեմ, որոնք գերման ֆաշիստներու հետ միատեղ մութին մեջ, Խորհրդային Միության դեմ դինյալ միջամտության ծրագիրներ կմշակեն»[7]։

Ֆրանսիայում ռեակցիոն տարրերի հարձակումը, որն ուղեկցվում էր երկրում ապրող օտարերկրացի աշխատավորների նողկալի հալածանքով, բնականաբար, նպաստում էր դաշնակցական պարագլուխների պասակտիվ գործունեության ակտիվացմանը, պարագլուխներ, որոնք ձգտում էին ցանկացած միջոցով հայ աշխատավորներին հեռացնել ֆրանսիացի բանվորների դասակարգային պայքարին մասնակցելուց, խանգարել ընդհանուր թշնամու դեմ մղվող պայքարում նրանց ուժերի համախմբմանը։ Ընդ որում, դաշնակցական պարագլուխներն առանձնապես պնդում էին Ֆրանսիայի ներքին գործերին հայերի չմիջամտելու անհրաժեշտությունը, Ֆրանսիայի Ժողովրդական Ճակատի ստեղծման ընթացքում հայերի կողմից քաղաքական ակտիվություն դրսևորելու անթույլատրելիությունը, չմոռանալով ամեն անգամ հիշեցնել, որ հայերը պետք է գնահատեն ֆրանսիացիների մեծահոգությունը, երբեք չմիջամտեն նրանց ներքին գործերին և ապրեն համեստ, ինչպես վայել է հյուրերին։

Դաշնակցական պրոպագանդիստների նման հայտարարություններին արժանի պատասխան տալու համար 1936 թ. ապրիլի 25-ին Ֆրանսիայի կոմկուսի Փարիզի սեկցիայի ղեկավարության նախաձեռնությամբ Փարիզի արվարձան Ալֆորվիլում կազմակերպվեց մասսայական մեծ միտինգ, որին մասնակցում էին մոտ հազար հայ բանվորներ, Փարիզի և նրա արվարձանների բնակիչներ։ Այդ միտինգում զեկուցումներով հանդես եկան կոմունիստներ Դ. Դավիթյանն ու Մ. Մանուշյանը, որոնք մերկացրին Ֆրանսիայում դաշնակցական գործակալների կեղծ լոզունգներն ու սխալ փաստարկները, գործակալներ, որոնք հայ աշխատավորներին կոչ էին անում «չմիջամտել քաղաքականությանը»[8]։

«Այդ քաղաքականությունը,— իր զեկուցման մեջ նշեց Մ. Մանուշյանը,— հայ աշխատավորները մեկուսացնելով տեղացի աշխատավոր ժողովուրդեն, անոր մեջ մեռցուցած է թե՛ իրենց բնատուր հատկությունները, թե՛ արգիլած է ստանալու քաղաքակրթական այն հսկայական դաստիարակությունը, որ անոնք կարող էին և պետք էին ստանալ տեղացի առաջադեմ ժողովուրդեն... Մենք ենք, որ դասակարգային ինքնագիտակցություն ներկայացնելով հայ աշխատավորության երակներուն մեջ, կաշխատինք բարձրացնել անոր քաղաքակրթական մակարդակը, ի հայտ բերել անոր մարդկային, ազգային բոլոր բնատուր հատկությունները և զայն տերը դարձնել ինքզինքին»[9]։

Հայ աշխատավորների հաջորդ մասսայական միտինգը, որ կազմակերպել էին Փարիզի հայ կոմունիստները, տեղի ունեցավ 1936 թ. սեպտեմբերի 18-ին, Փարիզի արվարձան Բելվիլում։ «Ինչպե՞ս պաշտպանել Սովետական Հայաստանը» թեմայով զեկուցում կարդաց Ֆրանսիայի հայկական գաղթօջա-

---

7 «Զանգու», 20. III. 1936։
8 «Առաջ», 12. V. 1936։
9 «Զանգու», 1. V. 1936։

խի աչքի ընկնող հասարակական-քաղաքական գործիչ, Հայաստանին օգնություն ցույց տվող կոմիտեի վարչության անդամ, կոմունիստ Մ. Ասատրյանը։ Նրա զեկուցումից հետո միտինգի մասնակիցների ընդունած բանաձևում մասնավորապես ասվում էր. «Մենք, Պելվիլի հայ աշխատավորներս, մեծ և խոր հավատք ունինք Խորհրդային Հայաստանի և Խորհրդային Միության կեդրոնական կառավարության վրա, որ աշխարհի մեկ վեցերորդ մասին մեջ ամենաարդար կերպով լուծած է ժողովուրդներու ազգային հարցը և զանոնք կառաջնորդե երջանիկ ու բարգավաճ կյանքի։

Կեցցե՛ Խորհրդային մեծ Միությունը։

Կեցցե՛ անոր անբաժան մասնիկը եղող Խորհրդային Հայաստանը։

Կեցցե՛ գաղթահայ աշխատավոր ժողովրդի միությունը։ Անկցի՛ն անոր բոլոր դույն թշնամիները»[10]։

1936 թ. գարնան մոտերքին, շնորհիվ հայ կոմունիստների և հայ առաջադեմ մտավորականության ներկայացուցիչների ձեռնարկած ջանքերի, Ֆրանսիայում առկա էին բոլոր անհրաժեշտ նախադրյալները միասնական ճակատ, մի փոքր ավելի ուշ՝ 1937 թ., Ֆրանսիայի հայերի Միացյալ ժողովրդական ճակատ ստեղծելու համար։

Համատեղ ջանքերով հայերի միացյալ ճակատի կազմակերպումն իրականացնելու ուղղությամբ առաջին քայլը կատարեցին Մարսելի հայ աշխատավորները։ 1936 թ. մարտին Մարսիլում տեղի ունեցած ընդհանուր ժողովում, որին ներկա էին ավելի քան 30 տարբեր հայկական հայրենակցական միությունների, քաղաքական կուսակցությունների, երիտասարդական ու մարզական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ստեղծվեց ժողովրդական կոմիտե։ Կոմիտեի խնդիրն էր Մարսելի հայ աշխատավորների քաղաքական, սոցիալական շահերի և նրանց իրավունքների պաշտպանությունը։ Որոշ ժամանակ անց Մարսելի օրինակով ժողովրդական ճակատի կոմիտեներ ստեղծվեցին Լիոն, Գրենոբլ, Ռոման, Տեսսին և այլ քաղաքներում[11]։

Ֆրանսիայի կոմկուսի հայկական սեկցիայի առջև ամբողջ հրատապությամբ հառնեց հայ աշխատավորների այդ մասսայական շարժումը կազմակերպելու և պատշաճ հունի մեջ դնելու, ճակատի լոզունգների կենսագործմանը հասնելու և այդ բազայի վրա ֆրանսիացի հայերի Միացյալ ժողովրդական ճակատ ստեղծելու խնդիրը։ Ընդ որում, Ֆրանսիայի կոմկուսի հայկական սեկցիայի ղեկավարությունն իր գործողություններում առաջնորդվում էր Կոմինտերնի VII կոնգրեսի որոշմամբ, որն առաջ էր քաշել բանվոր դասակարգի գործողությունների միասնության համար մղվող պայքարի հետագա ծավալման և դրա հիման վրա ֆաշիզմի և պատերազմի դեմ ժողովրդական լայն ճակատ ստեղծելու խնդիրը։ Կոնգրեսի որոշման մեջ առանձնապես ընդգծվում էր, որ «բանվոր դասակարգի պայքարի միասնական ճակատի ստեղծումը ներկա պատմական էտապում միջազգային բանվորական շարժման գլխավոր, մերձավորագույն խնդիրն է»[12]։

---

10 Նույն տեղում, 26. IX. 1936։

11 Նույն տեղում, 14. V. 1936։

12 «Резолюции VII Всемирного Конгресса Коммунистического Интернационала», М., 1935, էջ 13։

Հայկական գաղթօջախի հայրենասիրական և առաջադիմական բոլոր տարրերի համախմբման գործում հայ կոմունիստներին մեծ օգնություն ցույց տվեց 1936 թ. օգոստոսին Ֆրանսիայի կոմկուսի հայկական սեկցիային առընթեր ագիտացիայի և պրոպագանդայի բաժնի ստեղծումը։ Այդ բաժնի հրահանգներից մեկում առանձնապես ընդգծվում էին աշխատանքի կազմակերպական ձևերի ուրույն առանձնահատկությունները, որոնք պետք է հաշվի առնեին տեղական կոմիտեները՝ միասնական, իսկ այնուհետև Միացյալ ժողովրդական ճակատի կազմակերպությունների ստեղծման պրոցեսում[13]։

Միացյալ ճակատի ձևավորման կազմակերպական պրոցեսում Ֆրանսիայի կոմկուսի հայկական սեկցիայի ղեկավարությունից ամենից առաջ պահանջվեց հիմնավորապես վերանայել այն մի շարք հնացած դրույթներն ու չափանիշները, որոնցով նա առաջ ղեկավարվում էր Ֆրանսիայի որոշ հայկական քաղաքական կուսակցությունների գնահատականը որոշելիս։ Ելնելով Ֆրանսիայում ժողովրդական ճակատի ստեղծման փորձից, Ֆրանսիայի կոմկուսի հայկական սեկցիայի ղեկավարությունը գտնում էր, որ Ֆրանսիայի հայերի Միացյալ ճակատ կարելի է ստեղծել մասնավորապես այնպիսի երկու քաղաքական կուսակցությունների միջև, որոնք սկզբունքորեն հետևում են միևնույն քաղաքական նպատակներին՝ Ֆրանսիայի կոմկուսի հայկական սեկցիայի անդամ կոմունիստների և հայկական մանրբուրժուական «Հնչակ» կուսակցության անդամների միջև։ Ուստի հայերի Միացյալ ճակատի ստեղծման հանապարհին առաջին գործնական քայլը պետք է լիներ համաձայնությունը Ֆրանսիայի կոմկուսի հայկական սեկցիայի և «Հնչակ» կուսակցության ֆրանսիական բաժանմունքի ղեկավարության միջև[14]։

Սակայն այդ համաձայնությունը ձևռք բերելը հեշտ չէր։ Պետք է նշել, որ դեռևս 1924 թ. գարնանը հայկական սոցիալ-դեմոկրատական «Հնչակ» կուսակցության անդամները դիմել էին Ֆրանսիայի կոմկուսակցության Կենտկոմին, խնդրելով իրենց կոլեկտիվ կերպով ընդունել Ֆրանսիայի կոմկուսի անդամ, վկայակոչելով «Հնչակ» կուսակցության VIII համագումարի որոշումը։ Սակայն Ֆրանսիայի կոմկուսի ղեկավարությունն այն ժամանակ մերժել էր կոլեկտիվ կերպով Ֆրանսիայի կոմկուսի շարքերն ընդունվելու մասին նրանց առաջարկությունը, պնդելով յուրաքանչյուրի անհատական ընդունելության վրա և պայմանով, որ նրանք պետք է անցնեն թեկնածուական ստաժ՝ երեք ամիս բանվորների համար և վեց ամիս մտավորականության ներկայացուցիչների համար[15]։ Այդ ժամանակից սկսած Ֆրանսիայում «Հնչակ» կուսակցության ղեկավարությունը խոսքով բազմիցս արտահայտվել էր հայ կոմունիստների հետ համաձայնագիր կնքելու օգտին, բայց իրականում «ձևական դժվարությունների» պատրվակով խուսափում էր դրա իրականացումից[16]։ Ընդ որում, գլխավոր փաստարկը, որ իրենց արդարացնելու համար

---

13 «Զանգու», 6. XI. 1936։

14 Դ. Դավիթյան, Էջեր հուշերից (ձեռագիր), 1967. Բնագիրը պահվում է Ֆրանսիայի կոմկուսի Կենտկոմին առընթեր Մորիս Թորեզի ինստիտուտի պատմության բաժնում։ Ինստիտուտի դիրեկցիան այդ ձեռագրի հայերեն պատճեններից մեկը սիրով տրամադրել է այս հոդվածի հեղինակին, որի համար հեղինակը իր խորին երախտագիտությունն է հայտնում։

15 Л. Хуршудян, Зарубежные армянские партии на современном этапе (автореферат докторской диссертации), Ереван, 1964, էջ 8։

16 «Զանգու», 27. III. 1936։

բերում էին «Հնչակի» ղեկավարները, այն էր, որ հայ կոմունիստների հետ համաձայնության համար անհրաժեշտ է ստանալ «Հնչակ» կուսակցության՝ ԱՄՆ-ում գտնվող Կենտկոմի թույլտվությունը։ «Զանգու» թերթն իր «Ովքե՞ր են Միացյալ և ժողովրդական ճակատի թշնամիները» վերնագրով խմբագրական հոդվածում, վերլուծելով Ֆրանսիայում «Հնչակ» կուսակցության ղեկավարության գրաված դիրքի հետևանքով ստեղծված իրադրությունը և հաշվի առնելով «Հնչակ» կուսակցության շարքային անդամների շրջանում հայ կոմունիստների կատարած աշխատանքի դրական փորձը, առաջարկեց դնել անմիջականորեն կոմունիստների տեղական կուսակցական բջիջների և «Հնչակ» կուսակցության շարքային անդամների միջև համաձայնագիր կնքելու հարցը, դրանով իսկ համապատասխան ճնշում գործադրելով Ֆրանսիայում այդ կուսակցության ղեկավարության վրա[17]։

«Զանգու» թերթի նախաձեռնությունը շուտով հաջողությամբ պսակվեց։ Անցավ ընդամենը մի քանի ամիս, և երկրի մի շարք դեպարտամենտներից սկսեցին տեղեկություններ ստացվել Միության ճակատի շրջանակներում կոմունիստների և «Հնչակ» կուսակցության անդամների միջև համաձայնագիր կնքելու փաստերի մասին։ «Զանգու» թերթի թղթակիցներն իրենց հաղորդումներում ընդգծում էին, որ Ֆրանսիայի մի շարք քաղաքներում հայերի Միացյալ ճակատի կոմիտեներն արդեն իրականություն են դարձել։ Մասնավորապես, թերթի՝ Մարսելի թղթակիցն այդ կապակցությամբ հրատարակեց Միացյալ ճակատի Մարսելի կազմակերպության պաշտոնական հայտարարությունը, որտեղ ասվում էր. «Ուրախությամբ կհայտարարենք, որ մեկ կողմե Ս. Դ. Հ. կուսակցության Մարսելի մասնաճյուղը, մյուս կողմե Ֆրանսիայի կոմկուսի ներկայացուցիչ հայ ընկերները Միացյալ ճակատ կազմելու առաջարկությամբ իրենց ունեցած խորհրդակցական ժողովներու ընթացքին, քննելով Խորհրդային Միության և Խորհրդային Հայաստանի պաշտպանության ու գաղութին հայ աշխատավորության շահերու պաշտպանության հարցերը, հաստատելով այդ հարցերու շուրջ տեսակետներու նույնությունը, ընդունելով միացյալ ուժերով գործելու անհրաժեշտությունը, ըմբռնելով հայ աշխատավորության կազմակերպման հսկայական նշանակությունը, հասկանալով զանազան խմբերու և անհատներու մեջ հայտագրի ներքև համախմբվելու անհրաժեշտությունը, որոշեցին՝

Առաջադրված խնդիրները կյանքի կոչելու միակ մտահոգությամբ կազմակերպել Միացյալ ճակատ։

Միաժամանակ ստեղծել համագործակցական մնայուն մարմին՝ Միացյալ ճակատի միութենական քաղաքականությունը մասսայականացնելու համար։

Միացյալ ճակատի ստեղծման այս օրինակելի ակտը հայտարարությունեն հետո, մենք հավատացած ենք, որ գաղութիս բոլոր առողջ բանականությամբ առաջնորդվող տարրերը—առաջին առթիվ բանվորները—պիտի ըմբռնեն այս համագործակցության կենսական օգտակարությունը և անոր շուրջ համախմբելու հրամայականությունը»[18]։

1937 թ. հունիսին Ֆրանսիայի կոմկուսի հայկական սեկցիայի ղեկավարությունը մի շարք հանդիպումներ ունեցավ «Հնչակ» կուսակցության Կենտ-

17 Նույն տեղում, 3. IV. 1936։

18 Նույն տեղում, 12. III. 1937։

կոմի պատվիրակության անդամների հետ, որոնք եկել էին Փարիզ, և նրանց առաջարկեց «Հնչակ» կուսակցության ֆրանսիական բաժանմունքի ղեկավարությանը համապատասխան լիազորություններ տալ կոմունիստների հետ պաշտոնական համաձայնագիր կնքելու համար։ Այդ լիազորությունները տրվեցին և շուտով սկզբունքային պայմանավորվածություն ձեռք բերվեց Միացյալ ճակատ ստեղծելու վերաբերյալ այդ երկու կուսակցությունների միջև համաձայնագիր կնքելու համար։

«Համաձայնագրի ստորագրման վերջին ժողովը,— գրում է Դ. Դավիթյանը,— տեղի ունեցավ 1937 թ. հունիսի 30-ին ընկ. Ա. Կոստանտինյանի բնակարանին մեջ, որուն ներկա էին Ս. Դ. Հ. կուսակցության կողմն Մարդար Ավետիսյան, Նպարեթ Փշտիկյան և Հարություն Բաղդասարյան, իսկ ֆրանսկոմկուսի հայ հատվածի կողմն ընկերներ Ալեքսանդր Կոստանտինյան, Միսակ Մանուշյան և Դավիթ Դավիթյան»[19]։

Այսպիսով, հայ կոմունիստների նախաձեռնության և այդ գործում Ֆրանսիայի կոմկուսի Կենտկոմի կողմից նրանց ցույց տրված օգնության շնորհիվ գործնականում հաջողվեց իրականացնել Ֆրանսիայի հայերի Միացյալ ժողովրդական ճակատի ստեղծումը, դրանով իսկ էլ ավելի մասսայական բնույթ հաղորդելով Ֆրանսիայի հայկական գաղթօջախի աշխատավորների առաջադիմական շարժմանը և ժամանակի ընթացքում այն դարձնելով հասարակական-քաղաքական ամենաազդեցիկ ուժը։ Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեին այդ շարժման մեջ ներգրավվեցին ոչ միայն Սովետական Հայաստանի բարեկամներն ու Ֆրանսիայի հայկական այլ քաղաքական կուսակցությունների՝ կոմունիստներին համակրող հայրենասիրական տարրերը, այլև «Դաշնակցություն» կուսակցության շատ շարքային անդամներ։ Բացի այդ, Միացյալ ժողովրդական ճակատի ստեղծման բուն փաստը և հայ աշխատավորների մասսայական մասնակցությունը դրա ստեղծմանը, զգալի տեղաշարժեր առաջացրեց այդ կուսակցության որոշ մասի մեջ. և պատահական չէ, որ երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին դաշնակցական պարագլուխներին այդպես էլ չհաջողվեց իրենց կուսակցության շարքային անդամներին ներքաշել հակաժողովրդական ավանտյուրաների մեջ, նրանց դարձնել հիտլերյան պլանների հանցակից[20]։

1938 թ. մոտերքը Ֆրանսիայի հայերի Միացյալ ժողովրդական ճակատի կազմակերպությունները էլ ավելի ամրապնդվեցին ի հաշիվ հայ լիբերալ-դեմոկրատական «Ռամկավար-Ազատական» կուսակցության անդամների և Ֆրանսիայի հայ առաջադեմ մտավորականության ներկայացուցիչների ներգրավման։

1937—1939 թթ. Ֆրանսիայի հայկական գաղթօջախը Միացյալ ժողովրդական ճակատի կազմակերպությունների միջոցով ուժերի ներածին չափ իր ավանդը ներդրեց նաև հանրապետական Իսպանիայի պաշտպանության վեհ գործում։ Ֆրանսիայի կոմունիստական կուսակցությունը, կատարելով իր ինտերնացիոնալ պարտքը, Իսպանիայի հանրապետությունը ֆաշիզմից պաշտպանելու համար Կոմինտերնի կոչով այնտեղ ուղարկեց իր լավագույն զա-

---

19 Դ. Դավիթյան, Էջեր հուշերից։

20 «Коммунист», 20. IX. 1966.

վակներին, որոնց մեջ կային նաև Ֆրանսիայի հայկական գաղթօջախի ավելի քան հարյուր ներկայացուցիչներ[21]։

«Յումանիտե» թերթում Ժ. Դյուկլոյի «Իսպանիան և օտարերկրացիները» հոդվածի հրապարակումից անմիջապես հետո, որը Ֆրանսիայի օտարերկրացի աշխատավորներին հանրապետական Իսպանիայի պրոլետարիատի հետ համերաշխության կոչ էր անում, տասնյակ հայ աշխատավորներ Իսպանիա մեկնելու պատրաստակամություն հայտնեցին[22]։

Հայկական գաղթօջախի աշխատավորները ակտիվորեն մասնակցում էին հանրապետական Իսպանիային օգնություն ցույց ավող կոմիտեի գործունեությանը, կոմիտե, որը միջոցներ էր հավաքում հանրապետական Իսպանիային օգնելու ֆոնդի համար։ Հայ աշխատավորները օգնության ֆոնդին հատկացնում էին իրենց մեկ օրվա աշխատավարձը, հավաքում էին պարեն և հանդերձանք, բարոյական աջակցություն էին ցույց տալիս Իսպանիայի ժողովրդին՝ ֆաշիզմի դեմ մղվող նրա պայքարում[23]։ Զգալի քանակությամբ փաստական նյութերը, որոնք լուսաբանում են այն տարիների փառապանծ սխրագործությունների պատմությունը, մեզ օգնում են հասկանալու այն ջանքերի վիթխարի մասշտաբները, որ ներդնում էին հակաֆաշիստական բոլոր ուժերը, այդ թվում Ֆրանսիայի հայ հակաֆաշիստները, Իսպանիայի ազատագրության համար մղվող պայքարում[24]։

Հեղափոխական-ազատագրական պատերազմը Իսպանիայում 1936—1939 թթ. հեգեմոնիական պայքարի գպրոց էր, որը ձևավորեց տոկուն հակաֆաշիստների հիանալի կադրեր, և պատահական չէ, որ 1940—1944 թթ. Ֆրանսիայի դիմադրության շարժման ղեկավարներից ու ակտիվ մասնակիցներից շատերը հենց նրանք էին, ովքեր ժամանակին անցել էին Իսպանիայի ազատության համար մղված պայքարի այդ գպրոցը։

1939 թ. տշնանը Ֆրանսիայի կոմկուսն արգելելու մասին Դալադյեի կառավարության դեկրետից և առաջադիմական բոլոր կազմակերպությունների դեմ սկսված մասսայական բռնություններից անմիջապես հետո Ֆրանսիայի հայերի Միացյալ ժողովրդական ճակատը ստիպված էր ընդհատակ անցնել։ Սակայն չորս տարի անց, 1943 թ. գարնանը, այդ կազմակերպության փորձը հաշվի տոնվեց և գործնականորեն օգտագործվեց հայ ազգային ճակատի ստեղծման ժամանակ, որին վիճակված էր կարևոր դեր խաղալ հիտլերյան օկուպանտներից և նրանց վիշիական կամակատարներից Ֆրանսիայի ազատագրության պայքարի համար Ֆրանսիայի հայկական գաղթօջախի հայրենասիրաբար տրամադրված ուժերին մոբիլիզացնելու գործում։

СОЗДАНИЕ ОБЪЕДИНЕННОГО НАРОДНОГО ФРОНТА АРМЯН ФРАНЦИИ (1936—1938 гг.)

Резюме

ТИГРАН ДРАМПЯН

Трудящиеся армяне внесли свой посильный вклад в общенародную борьбу французского рабочего класса. Наглядным свидетельством

21 «Ավանգարդ», 17. VII. 1966։

22 „Humanite", 28. X. 1936.

23 «Զանգու», 3. IV. 1937։

24 ՀՍՍՀ կենտրոնական պետական պատմական արխիվ, ֆ. 314, գ. 19, ց. 1, թ. 7—10։

этому служат многочисленные факты, явствующие об активном участии трудящихся армян Франции в забастовочном движении и общественно-политической жизни Франции 30-х годов, об усилиях Армянской секции Французской Компартии по мобилизации всех патриотических элементов колонии в общенациональную борьбу Французского пролетариата против буржуазии, в защиту республиканской Испании и в борьбе против буржуазно-националистической идеологии дашнаков во Франции.

В 1937 г. был создан Объединенный народный фронт армян Франции, что сообщило еще больший размах массовому прогрессивному движению армянских трудящихся.